

ՏԵՂԻ Է ՌԻՆԵՑԵԼ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ  
ԶԲԱՂՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

ՀՀ Սյունիքի մարզպետարանում սեպտեմբերի 6-ին տեղի է ունեցել Գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նիստը, որը վարում էր հանձնաժողովի նախագահ, ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը: Խորհրդի նիստին մշտական հանձնաժողովի անդամներից բացի, ներկա էին նաև ՀՀ Սյունիքի մարզպետի օգնական Վ. Դավթյանը, Կապանի Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Վահան քահանա Հեբոյանը, Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների ներկայացուցիչներ: Նիստի օրակարգում ընդգրկված «Պտղի սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման ծրագիրը» ներկայացրեց Հայաստանում «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության պատասխանատու Սոֆիկ Մինասյանը: Կարևորվեց հանրության շրջանում աղջիկ երեխայի սեռը և նրա նկատմամբ խտրական վերաբերմունքի նվազեցման նպատակով տեղական լրատվամիջոցներով և համայնքային հանդիպումների ժամանակ տեսաֆիլմերի ցուցադրությունը: Քննարկվող հարցի շուրջ ելույթ ունեցան Կապանի Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Վահան քահանա Հեբոյանը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության բաժնի պետ Հայկ Հարությունյանը: Այնուհետև հանձնաժողովի անդամներն ու մասնակիցները անցել են մտքերի փոխանակության, քննարկել հանձնաժողովի գործունեությանը վերաբերող ընթացակարգային և կազմակերպական հարցեր: Ամփոփելով նիստը՝ օրակարգում ընդգրկված հարցի շրջանակում ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Դավթյանը տվել է համապատասխան հանձնարարականներ, համաձայն որոնց հանձնաժողովի անդամները պետք է ուսումնասիրեն քննարկվող հարցերի հետ առնչվող առկա հիմնախնդիրները և սահմանված ժամկետում ներկայացնեն առաջարկություններ: